

«ԿԵՍ ԱԶԳԻՆ ՀԱՅՈՑ» ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սահակի ու Մաշտոցի կրթալուսավորական լայնահուն գործունեությունների ժամանակամիջոցում շարունակվում էր Արշակունիների Հայոց թագավորությունից ցավագին հոգեվարքը, որը հատկապես իրեն զգալ տվեց Վուսահայուն թագավորի մահվանից հետո: Թեև պարսից թագավոր Հակերտ Ա-ի (399-421) օրոք՝ 409 թ. Պարսկաստանում թուլլատրվեց քրիստոնեական կրոնի ազատ դավանում¹, սակայն, ըստ Ղազար Փարպեցու, պարսից արքան երկյուղում էր, որ Հայաստանը գրացի լինելով Բյուզանդական կայսրությունը, դյուրությամբ կարող է հնազանդվել նրան և դառնալ Պարսից պետությունից ախոյանը, քանի որ հայերը «յօրինացս մեր օտար են և ատեցողք, և միահալան ունին զպաշտօն նոցա և զօրէնս»²: Հակերտ Ա-ը համոզված էր, որ եթե Սասանյան տանից որևէ մեկը թագավորի Հայաստանում, «յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի թագաւորութիւնս մեր. և նոքա (հայերը – Վ. Վ.) ցանկ երկիւղիւ և գողութեամբ ծառայեն մեզ»: Ավելին, նա փայփայում էր այն հույսը, որ այդ կերպ գուցե հայերը «սովորութիւն առնուն յանկէջ յօրէնս մեր...»³, ընդունել պարսից կրոնը:

Սակայն Հակերտ Ա-ի հույսերն ի դերև եղան. թեև 416 թ. նա Հայոց թագավոր կարգեց իր որդի Շապուհին (416-420), սակայն հայ նախարարները թշնամաբար ընդունեցին նրան, ուստի Շապուհը հարկադրված հեռացավ Հայաստանից: Հակերտ Ա-ի հաջորդ Վուսահայուն Ե-ի օրոք քաղաքական և կրոնական հալածանքների նոր ալիք բարձրացավ: Նպատակը Հայաստանի քաղաքական կազմալուծումն էր: Բայց այն դարձյալ մնաց աննվաճ: Հայ նախարարներին հնազանդեցնելու փորձերը ձախողվեցին: Նախարարները «հանգերձ զօրօք իւրեանց՝ տան ընդ դնդին Պարսից պատերազմ. հարկանեն զգօրսն»⁴, – վկայում է Մովսես Խորենացին: Հայերը զորակից եղան պարսիկների դեմ սլատերազմող բյուզանդացիներին, որոնք 421 թ. Միջագետքում հաղթանակ տարան: Վուսահայուն Ե-ն 422 թ. հաշտություն կնքեց Թեոդոս Ի կայսեր հետ:

¹ The Cambridge History of Iran, vol. 3(1). The Seleucid, Parthian and Sasanian periods. London, 1983, p. 485.

² Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան (այսուհետև Փ ա Ր պ ե ց ի), աշխ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տիփլիս, 1904, I, ԺԲ, էջ 18:

³ Նույն տեղում, էջ 18-19:

⁴ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խ ո Ր ե ն ա ց ի), աշխ. Մ. Աբեղեան և Ս. Թարութիւնեան, III, ԾԶ, Տիփլիս, 1913, էջ 332:

420—421 թթ. խառնաշփոթ իրավիճակում, Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը որոշեցին կրթալուսավորական առաքելությամբ մեկնել Հայաստանի բյուզանդական բաժին: Մովսես Խորենացին գրում է, որ երբ «ետես մեծն Սահակ գայս ամենայն չարիս ի մասինն Պարսից, գնաց նա գկողմամբք արևմտից մերոյ աշխարհիս, ի բաժին մասինն Յունաց, և ոչ ըստ արժանեաց իւրոց եղև ընկալեալ»⁵: Մինչդեռ Մաշտոցի կենսագիր Կորյունը ոչինչ չի հաղորդում բյուզանդական հատվածում Սահակի գործունեության մասին, ուստի այն տպավորությունն է ստեղծվում, որ միայն Մաշտոցն է այնտեղ լուսավորչական գործունեություն ծավալել: Կորյունն իր առջև նպատակ է դրել շարադրել իր ուսուցչի կենսագրությունը, ուստի անտեսել է պատմարժան այլ իրողություններ: Նրան ինչ-որ չափով լրացնում է Խորենացին:

Փաստորեն, մի ամբողջ տասնամյակ, այսինքն՝ Վրաստանում դիր և լուսավորություն տարածելուց մինչև Սահակի ու Մաշտոցի Բյուզանդիա մեկնելը, պատմիչները ոչինչ չեն հաղորդում նրանց գործունեության մասին: Կորյունը գրում է, որ Վրաստանում իր լուսավորչական առաքելությունից հետո Մաշտոցը «դարձեալ ելանէր, շրջէր զտեղեօք կարգելովք և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց, զուարթացուցանել, նորոգել և հաստատել»⁶: Եվ միայն այն ժամանակ, երբ «ընդ ամենայն տեղիս լի առնէր զսուրբ Աւետարան Տեառն և ամենեցուն զգուշացուցեալ զկենաց ճանապարհն վարելոյ», Մաշտոցը մտածեց «Հայոց կես ազգի» մասին⁷: Ամենայն հավանականությամբ, նշված տասնամյակում Սահակն ու Մաշտոցը հոգ են տարել նաև Հայաստանի հարավային գավառների լուսավորության մասին:

Կորյունի հավաստմամբ, Մաշտոցն Արևելյան Հայաստանում և Վրաստանում ձեռք բերած հուշակի շնորհիվ հենց սկզբից բարեհաճ վերաբերմունքի արժանացավ Արևմտյան կողմերի եպիսկոպոսների, իշխանների, հատկապես Անատոլիոս գորապետի կողմից: Սակայն Խորենացու վկայությունից երևում է, որ Հայաստանի այդ մասում Մաշտոցի լուսավորչական գործունեությունը հարթ չի ընթացել: Պատճառը, անշուշտ, այն էր, որ բյուզանդական հատվածի հայ եկեղեցին ենթարկվում էր ոչ թե էջմիածնի Մայր աթոռին, այլ Կեսարիայի մետրոպոլիտոսությանը, որը տակավին 373 թ. (Ներսես Մեծ կաթողիկոսի մահվան տարում) Հայոց կաթողիկոսի ենթակայությունից հանել էր բյուզանդական բաժնի հայ եկեղեցին՝ այն միացնելով իր եկեղեցաթեմին: Նման իրավիճակում Մաշտոցի առաքելության հաջող ընթացքի համար անհրաժեշտ էր Հայոց կաթողիկոսի միջնորդությունը: Ուստի, ինչպես վկայում է Խորենացին, Սահակն իր թողանք՝ Վարդան Մամիկոնյանին և Մեսրոպ Մաշտոցին դիվանագիտական առաքելությամբ ուղարկում է Թեոդոս Բ կայսեր և Կ. Պոլսի Ատտիկոս պատրիարքի մոտ՝ հանձնարարական նամակներով: Կայսրին ուղղած թղթում Սահակը գրում էր, որ Հայաստանի բյուզանդական մասում «ոչ հանդիպե-

⁵ Նույն տեղում, III, ԾԷ, էջ 333:

⁶ Կորյուն, Վարք Մաշտոցի (այսուհետև՝ Կորյուն), հրատ. Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 64:

⁷ Նույն տեղում:

ցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա: Այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զնշանադիրսն անգամ ոչ ընկալանք»: Նա կայսրից աջակցութիւնն էր խնդրում բյուզանդական կողմում դպրոցներ բացելու, լուսավորութիւնն տարածելու համար: Նույն խնդրանքով Սահակը նամակներ ուղարկեց նաև Ատտիկոս պատրիարքին և Բյուզանդական Հայաստանում տեղակայված զորքերի հրամանատար Անատոլիոս զորապետին⁹: Ըստ Կորյունի, Անատոլիոս զորապետն է կայսեր առջև միջնորդում, որպեսզի Մաշտոցին արտոնվի լուսավորութիւնն տարածել այդ բաժնում, ինչը, իհարկե, պակաս հավանական է: Կորյունն այլ առիթով գրում է, որ Մաշտոցը Անատոլիոսին հանդիպում է այն ժամանակ, երբ արդեն եղել էր Կ. Պոլսում, ձեռք բերել կայսեր և պատրիարքի համաձայնութիւնը, որից հետո վերադարձել է Հայաստանի բյուզանդական բաժին և կայսեր սակերը (հրովարտակը) ձեռքին ժամանել Անատոլիոսի մոտ¹⁰:

Կայսերն ուղարկած Սահակի թղթից երևում է, որ վերջինս նույնպես այցելել է Հայաստանի բյուզանդական բաժին: Թեև այդ թղթի վավերականութիւնը կասկածի տակ է առնվել¹¹, սակայն ստեղծված իրավիճակում այն դառնում էր անհրաժեշտ: Առանց Հայոց կաթողիկոսի հեղինակավոր միջնորդութեան, հնարավոր չէր հաջողութեան հասնել: Հենց Սահակի միջամտութեան շնորհիվ էր, որ այդ բաժնի հայ հոգևորականները սատարեցին Մաշտոցին: Նրանցից Դերջան գավառի Գինթ եպիսկոպոսը և ուրիշ եկեղեցականներ Մաշտոցին ուղեկցեցին կայսեր և պատրիարքի մոտ մեկնելիս¹², դրանով իսկ արտահայտելով իրենց հոգեկցութիւնը Սահակ-մաշտոցյան լուսավորական ձեռնարկումներին: Անշուշտ, Սահակ կաթողիկոսի համաձայնութեան դեպքում էր հնարավոր բյուզանդական մասի հայ եկեղեցին հանել Կեսարիայի աթոռի իրավասութիւնից և ենթարկել Կ. Պոլսի աթոռին: Կայսրը և պատրիարքը ընդառաջեցին Սահակին ու Մաշտոցին¹³:

Անցնելով բյուզանդական կողմերը, Մաշտոցն իր աշակերտների հետ շրջանցելով Կեսարիայի աթոռը (որը, հավանաբար, խոչընդոտում էր նրան), նախ այցելեց Մելիտենն քաղաքի եպիսկոպոսին, որին Կորյունը հիշում է Ակակիոս անունով: Սակայն, ինչպես հայտնի է, վերջինս Մելիտենեի եպիսկոպոս է եղել ավելի ուշ՝ 431-438 թթ.: Հավանաբար, Կորյունը շփոթել է Մաշտոցի այցելութեան պահին Մելիտենեի եպիսկոպոսի անունը, հիշելով Ակակիոսին, որը, ըստ VI դ. կարթագենացի մատենագիր Լիբերատուսի վկայութեան, նամակ է դրել Հայաստանի եպիսկոպոսներին, հորդորելով չընդունել թեոդորոս Մոպսուեստացու դրվածքներն իբրև

⁸ Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, III, Ծ է, էջ 333:

⁹ Նույն տեղում, էջ 334-335: Այս զորապետին հիշում է նաև Պրոկոպիոս Կեսարացին (տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, Թարգմ., առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 4):

¹⁰ Կ ո Ր յ ու ն, էջ 68:

¹¹ Տե՛ս Գ. Խ ա լ ա տ յ ա ը. Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренского. Ч. I, М., 1903, с. 324-325; Հ Ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց գրերը. Երևան, 1968, էջ 201-203, G. W i n k l e r. An Obscure Chapter in Armenian Church History (428-439).- REA, t. XIX, 1985, p. 91-92.

¹² Կ ո Ր յ ու ն, էջ 66:

¹³ Մ. Օ Ր մ ա ն Ե ա ն, Աթոռ Հայաստանեայց.- «Արարատ», 1887, № Բ, էջ 66-67:

նեստորական վարդապետութեան հեղինակի գրչի արգասիք¹⁴: Թեոդորոսը կարող էր, անշուշտ, հայտնի լինել նաև Կորյունին: Բայց ե դարում նրա նկատմամբ հայերի վերաբերմունքն այնպես բացասական չէր, ինչպես հետագա դարերում¹⁵:

Կորյունի հաղորդման համաձայն, Մաշտոցն Անատոլիոսին հանդիպել է «ի մուտ ճանապարհին»¹⁶, այսինքն բյուզանդա-պարսկական սահմանագլխին, հավանաբար Թեոդոսոպոլիս (Կարին) քաղաքում, որը գորպայետի նստավայրն էր: Վերջինս Մաշտոցի ժամանման մասին «գրով ցուցանէր կայսերն, որում անուն Թէոդոս կոչէին, որգի Արկադու կայսեր. ուստի և հրաման ելանէր՝ վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ»¹⁷: Բայց ակումիտ տիտղոսը Մաշտոցին շնորհվել է հետագայում, երբ նա ժամանել է Կ. Պոլիս: Կորյունի այս վկայութեան հետևում է, որ կայսրը չի արձագանքել Անատոլիոսի նամակին: Մաշտոցն ստիպված մեկնել է Մելիտենե քաղաք հայտնի իր հայահոծ բնակչությամբ: Քաղաքի մետրոպոլիտն անձնական կապեր ուներ Սահակ կաթողիկոսի հետ: Նա ընդառաջեց Մաշտոցին պաշտոնապես արտոնելով կայսրութեան մայրաքաղաք մեկնել: Կորյունի հավաստմամբ Մաշտոցն ու իր ուղեկիցները Կ. Պոլիս են մեկնել «յելեալ յանարևոյն դիմոսական»:¹⁸ «Դիմոսական» բառն ունի «ժողովրդական, հասարակաց, արքունի» իմաստը¹⁹: Մ. Աբեղյանը «յանարևոյն» արտահայտությունն ուղղել է «յանդրուարն»²⁰, որն ունի կառուց, սալակառուց, պատգարակ իմաստներ: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ «յանարևոյն»-ի տակ պետք է հասկանալ ոչ արյաց (ոչ պարսկական) լինելու հանգամանքը, իսկ դիմոսականն ունի հունական, պետական իմաստը, ինչը վկայություն է Մելիտենեից Կ. Պոլիս պետական (դիմոսական) փոխադրամիջոցով Մաշտոցի մեկնելու մասին²⁰:

Հր. Աճառյանը «յանարևոյն դիմոսականը» ուղղում է «յարքունևոյն դիմոսական», այդ արտահայտության մեջ տեսնելով «պետական դրամով, ինչքով, ծախսով» Մաշտոցի ու նրա ուղեկիցների ճանապարհորդելու իմաստ²¹: Փաստորեն, մինչև Մելիտենե քաղաք հասնելը Մաշտոցն ունեցել է մասնավոր անձի կարգավիճակ, իսկ այնտեղից Կ. Պոլիս է մեկնել որպես պետականորեն, պաշտոնապես արտոնված ուղևոր, ինչը, բնականաբար, դյուրացնելու էր նրա առաքելությունը: Ամենայն հավանականությամբ, Մաշտոցն ու նրա ուղեկիցները կայսրութեան մայրաքաղաք են մեկնել արքունի ճանապարհով, որը ձգվում էր Մելիտենե-Կեսարիա-Գալաթիա-Նիկոմեդիա-Քաղկեդոն-Կ. Պոլիս ուղեգծով:

¹⁴ Ն. Ա դ ո ն ց, Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների. - Մեսրոպ Մաշտոց, ժողովածու, Երևան, 1962, էջ 208):

¹⁵ Տե՛ս այս մասին Ե. Տ եր - Մ ի ն ա ս յ ա ն, Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին. - «Բանբեր Մատենադարանի», 1964, N 7, էջ 42-43:

¹⁶ Կ ո ղ ո ս ն, էջ 64:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Հր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 669:

¹⁹ Կ ո ղ ո ս ն, էջ 116, ծան. 109:

²⁰ Հ. Պ է ղ ո ս ն, Հայկական. - «Հանդես Ամսօրեայ», 1968, էջ 168-169:

²¹ Հր. Ա ճ ա ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 206:

Եվ այդպես, Մելիտենեից Մաշտոցը մեկնեց Կ. Պոլիս, աշակերտներին թողնելով Մելիտենի եպիսկոպոսի մոտ, ինչն, անշուշտ, վկայում է վերջինիս կողմից Մաշտոցի առաքելությանը հավանություն տալու մասին: Տվյալ պահին դա կարևորվում էր Կ. Պոլսում հաջող բանակցություններ սկսելու համար: Կայսրության մայրաքաղաքում Մաշտոցն այցելեց Թեոդոս Բ կայսեր և Ատտիկոս պատրիարքին, որոնք, ի վերջո, հավանություն տվեցին Սահակի և Մաշտոցի առաջարկներին: Ընգսմին տեղի իշխանությունները հոգացին Մաշտոցի ու նրա ուղեկիցների ծախսերը:

Կորյունը հաղորդում է, որ Թեոդոս կայսրը և պատրիարքը «ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք կարգելովք յեկեղեցւոյն և արքունեաց և ի պատուական իշխանաց քաղաքին»²²: Այս վկայությունից երևում է, որ կայսրն ու պատրիարքն անմիջապես չեն ընդառաջել Մաշտոցին, որն ստիպված է եղել իրեն ուղեկցողներին հետ որոշ ժամանակ մնալ այնտեղ: Եվ միայն «յետ Պասեքին» (Ջատիկից հետո) Մաշտոցը կարողացել է կայսրին ապացուցել իր առաքելության կարևորությունը («ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս») և նրանից թույլտվություն ստանալ՝ «Հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և վասն ժանտագործ ազգին բարբարիանոսաց և եկեղեցեաց հաստատութեան, և մեծամեծ պարգևօք պատուելոյ»²³:

Կորյունի վկայությունից երևում է, որ Մաշտոցը կայսրին ու պատրիարքին հավաստիացրել է («հաւանեցուցեալ ճշմարտին զարքունիսն») ուղղափառ հավատքին իր առաքելության շնորհիվ ակնկալվող օգուտները, ի մասնավորի աղանդավորներին հալածելու իր պատրաստակամություն մասին: Կայսրը և պատրիարքն ընդառաջել են Մաշտոցին, իհարկե, ելնելով իրենց պետության քաղաքական շահերից, որոնք պահանջում էին հոգևոր մերձակցությամբ Հայոց եկեղեցին կապել Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցու հետ և հայերին կտրել Սասանյան պետությունից: Նրանք հույս ունեին, որ սեփական գիր ու գրականությամբ զինված Հայոց եկեղեցին գերադասելու է ոչ թե Պարսկաստանի քրիստոնեական եկեղեցու, այլ Կ. Պոլսի աթոռի հետ ունենալիք միությունը: Կարծում ենք, դրանով է բացատրվում այն ջերմ վերաբերմունքը, որ Մաշտոցի հանդեպ ցուցաբերեցին հույն ժողովուրդը և երիտասարդ կայսրն ու եկեղեցու գլուխը: Կայսեր հատուկ հրովարտակով Մաշտոցին շնորհվեցին «ակումիտ» (հոգնաջան) և «եկղեստիաստիկոս» (ուսուցչապետ, ընդունապետ) տիտղոսները:

«Ակումիտ» պատվատիտղոսը Բյուզանդիայում գիտական (վարդապետական) կոչում էր, որը շնորհվում էր այն միաբանության անդամներին, որոնք զօր ու գիշեր, անգաղար, փոխնիփոխ աղոթում էին և զբաղվում գիտական աշխատանքներով: Միաբանությունն ուներ «վարժարան իմաստութեան», որտեղից «ելանէին մեծանուն ընդունք կամ մեծիմաստ վարդապետք»²⁴: Իսկ «եկղեստիաստիկոս» տիտղոսը տրվում էր սրբահեղ և իմ-

²² Կ ո Ր Յ ո Ւ ն, էջ 66:

²³ Նույն տեղում:

²⁴ Տե՛ս Նոր բառգիրք հայկազան լեզուի, հ. I, Երևան, 1979, էջ 27:

աստուծոյ մը աչքի ընկած եկեղեցականներին: Մաշտոցին նշված տիտղոսները շնորհելն ինքնին պետականորեն նրա լուսավորչական առաքելութեան խրախուսումն էր: Ինչպես վկայում է Կորյունը, Մաշտոցը կայսեր կողմից ստացավ նաև «զանընգդիմակաց հրամանն հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք»²⁵ և ապա մեկնեց լուսավորութուն տարածելու բյուզանդական Հայաստանում:

Մովսես Խորենացին գրում է, որ կայսրն ու պատրիարքը Մաշտոցի միջոցով Սահակ կաթողիկոսին ուղարկած թղթում մեղադրում են հայերին ասորի հոգևորականութեանը նախապատվութուն տալու, նույնիսկ «ամենայն սրտիւ» հեթանոս թագավորների կողմը հակվելու համար²⁶: Կայսրին և պատրիարքին, անշուշտ, անհանգստացնում էր այն փաստը, որ պարսից Վռամ Ե Գոռ արքայի (420–439) օրոք Պարսկաստանի քրիստոնյաները խղեցին իրենց կապերը Արևելքի մյուս քրիստոնյաների հետ և, հովանավորվելով Վռամ Ե-ի կողմից, հիմնեցին իրենց կաթողիկոսութունը Սելևկիա քաղաքում²⁷: Վերջինիս կաթողիկոսն անգամ հավակնում էր գերիշխել նաև Հայոց, Վրաց և Աղվանից եկեղեցիներին²⁸: Մաշտոցի քարոզչական առաքելութունը բյուզանդական Հայաստանում գալիս էր ապացուցելու, որ Հայոց եկեղեցին կապերը չի խզում Արևելքի մյուս եկեղեցիներից և բնավ էլ հակված չէ Սելևկիայի աթոռի գերակայութունն ընդունելու գաղափարին: Կայսրը և պատրիարքը համոզված էին, որ Վրաստանն ու Աղվանքը կընթանան Սահակ-մաշտոցյան լուսածիրով: Հատկանշելի է, որ Մաշտոցը հենց բյուզանդական կողմում իր քարոզչության ժամանակ էր, որ Բենիամինի օգնութեամբ հնարեց աղվաններն գրեթե²⁹: Դա պետք է կատարված լինի 422 թ. հետո, քանի որ, Կորյունի վկայութեամբ, աղվաններն գրեթե հնարելուց հետո Մաշտոցը վերադարձավ Վաղարշապատ, ներկայանալով Սահակ կաթողիկոսին և Արտաշես թագավորին³⁰, որը, ինչպես հայտնի է, գահակալել է 422 թ.:

Քանի որ, ինչպես նշվեց, բյուզանդական մասում Մաշտոցն արդեն ստեղծել էր աղվաններն գրեթե, ուստի փոքր-ինչ հետո, անշուշտ, Սահակի դիտութեամբ, նա մեկնեց Աղվանք, որի ժողովուրդը նույնպես սեփական լեզվով գիր ու գրականութուն չունեց և այդ պատճառով եկեղեցիներում մայրենի լեզվով ժամերգութուններ չունեցողները պատճառով: Ժամանակով Աղվանք՝ Մաշտոցը «երթեալ իջանէր յաշխարհն և հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին և ղնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն»³¹:

Մովսես Կաղանկատվացի գրում է, որ Մաշտոցը հայերեն, վրացերեն և աղվաններն գրեթե հնարելուց հետո «երթայր յԵրուսաղէմ մատուցանել

²⁵ Կ ո Ր Յ ո Ւ Ն, էջ 66:

²⁶ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, III, Ծ է, էջ 335-336:

²⁷ The Cambridge History of Iran, vol. 3(1) p. 485-486.

²⁸ Synodicon Orientate, ed. J. Chabot, Paris, 1902, p. 37-38.

²⁹ Կ ո Ր Յ ո Ւ Ն, էջ 68:

³⁰ Նույն տեղում, էջ 70: Խորենացի Մեսրոպ Մաշտոցի կողմից Աղվանքում լուսավորութուն տարածելը հիշատակում է վրացական գրեթե հնարելուց հետո (Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, III, Ծ Դ, էջ 329):

³¹ Կ ո Ր Յ ո Ւ Ն, էջ 70:

ուխտադրութիւն», որից հետո նա ժամանում է Ուտիք. ապա քարոզչութիւն ծավալում «յաշխարհն Ուտիացուց և յԱղուանս, և Լփինս. և՛ ի Կասպս, և՛ մինչև ի դուռն Չորայ»³²: Պատմագիրը հավատարիմ իր որդեգրած սկզբունքին, Մաշտոցի կողմից Աղվանքում ծավալած քարոզչութիւնը նույնպես առնչակցում է Երուսաղեմի հետ:

Կորյունի հաղորդման համաձայն, Մաշտոցը Հայաստանի բյուզանդական մասում աղվաններն գրեթէ հնարել է «աղուան ազգաւ» Բենիամինի օգնութեամբ՝ ուսումնասիրելով աղվաններն լեզվի առանձնահատկութիւնները³³: Մինչդեռ Խորենացին Բենիամինին համարում է սյունեցի. նրան հիշում որպէս «չնորհաւոր թարգման»³⁴: Անշուշտ, վերջինս պետք է գիտենար նաև հայերեն, որպէսզի կարողանար օգնել Մաշտոցին: Բայց նա կարող էր այդ անել բյուզանդական բաժնում, որտեղ, ինչպէս տեսանք, նա հանդիպել է Մաշտոցին, ուստի Խորենացու վերոնշյալ վկայութիւնը սրբագրելի է: Բենիամինին սյունեցի (հետևաբար հայ) ներկայացնելու միտումով Խորենացին Մաշտոցի կողմից աղվանից լուսավորութիւնը դնում է Վրաստանում նրա քարոզչական առաքելութիւնից անմիջապէս հետո:

Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների նպատակասլաց ջանքերով Հայաստանի բյուզանդական հատվածն ընթացավ երկրի մյուս մասն ընդգրկած հոգևոր հեղաբեկման ծիրով: Այդ բաժնի հայ ժողովուրդը հոգևորապէս փարված մնաց Հայ Առաքելադրոյմ եկեղեցուն, հայրենադիր հավատին և պահպանեց իր մշակույթն ու ազգային դիմագիծը: Հայերեն գրերի դյուտն առաջին հերթին ուզոված էր զրադաշտական կրօնի, հեթանոսութեան հարածուն ազգեցութեան դեմ, ինչը, բնականաբար, չէր կարող իրեն զգալ տալ բյուզանդական Հայաստանում, որտեղ նույնպէս հառնեց ազգային ինքնուրույնութեան, հոգևոր մշակույթի պահպանման համար մղվող պայքար, որը, սակայն, չունեցավ այն թափը, որպիսին տեսնում ենք Պարսից բաժնում: Ուստի, բյուզանդական բաժնում հայերը չստեղծեցին նշանավոր գրական գործեր ոչ հինգերորդ և ոչ էլ հաջորդ դարերում:

³² Մ ո վ ս է ս Կ ա դ ա ն կ ա տ ու ա ց ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ. Առաքելյանի I, Ի է, Երևան, 1983, էջ 95:

³³ Կ ո ռ յ ու ն, էջ 68:

³⁴ Խ ո ռ Ե ն ա ց ի, III, Ծ Դ, էջ 329:

К ОБСТОЯТЕЛЬСТВАМ ПРОСВЕЩЕНИЯ "ПОЛОВИНЫ НАРОДА
АРМЯНСКОГО"

ВРЕЖ ВАРДАНЯН

Р е з ю м е

В 405 г. Месропом Маштоцем была изобретена армянская письменность. Однако вплоть до 421 г. византийская часть Армении оставалась вне культурно-просветительских процессов, имевших место в другой части Армении. В 421 г. по велению главы Армянской церкви католикоса Саака Маштоц побывал у византийского императора Феодосия II и главы Константинопольского престола. Они разрешили ему распространять просветительскую деятельность в византийской части страны. Тем самым они надеялись способствовать сближению Армянской автокефальной церкви с Константинопольским престолом в противовес митрополиту Кесарии Каппадокийской и главы христианского (селевкийского) католикосата Персии.